

ԱՀ պետական ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում  
«Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՓԲԸ կողմից  
տրամադրվող  
բիզնես վարկեր

*Վարկավորման ընդհանուր պայմաններն են՝*

<b>Վարկի արժույթ</b>	<b>ՀՀ դրամ կամ ԱՄՆ դոլար</b>
<i>Պարմանները սահմանող մարմին</i>	«Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՓԲԸ Խորհուրդ
<i>Վարկի տեսակ</i>	Բիզնես վարկ
<i>Նվազագույն գումար</i>	1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կամ 2000 (երկու հազար) դոլար
<i>Առավելագույն գումար</i>	10000000 (տասը միլիոն) ՀՀ դրամ կամ 22000 (քսաներկու հազար) ԱՄՆ դոլար
<i>Մարման նվազագույն ժամկետ</i>	6 ամիս
<i>Մարման առավելագույն ժամկետ</i>	60 ամիս
<i>Վարկի տարեկան տոկոսադրույք</i>	ՀՀ դրամի դեպքում-18%, ԱՄՆ դոլարի դեպքում- 15%,
<i>Վարկ/գրավ առավելագույն սահմանաչափ</i>	1. Անշարժ գույքի գրավադրում- 50%, 2. Մեխանիզմների, արտադրական սարքավորումների, շրջանառու միջոցների, այլ արժեքների գրավադրում-40%
<i>Տրամադրման ձև</i>	միանվագ կամ փուլային ԱԶ-ի դեպքում՝ կանխիկ/անկանխիկ ՄՊԸ-ի դեպքում՝ անկանխիկ
<i>Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակ</i>	դիֆերենցված և արտոնյալ (վարկի մարման ձևն ու ժամանակացույցը՝ պայմանագրային, տոկոսի մարում՝ ամենամսյա մարումների ժամանակացույց)
<i>Տոկոսագումարների հաշվարկման կարգ</i>	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով
<i>Գրավի առարկա</i>	Անշարժ գույք, մեխանիզմներ, սարքավորումներ, շրջանառու միջոցներ, այլ արժեքներ
<i>Զեանկերպման վայր</i>	«Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՓԲԸ «Արցախ» մասնաճյուղ
<i>Հաճախորդի հետ հարադրակցման կարգ</i>	Հաճախորդի ընտրությամբ՝ փոստով, էլ.փոստով, Ընկերության գրասենյակում:
<i>Հաճախորդ</i>	իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ), որը դիմելու պահին չպետք է ունենա ժամկետանց և (կամ) խնդրահարույց դասակարգված վարկային պարտավորություն, ինչպես նաև բոլոր վարկերի գծով վերջին 12 ամսվա ընթացքում չունենա 120 և ավելի ժամկետանց օրերի առկայություն, իսկ անընդմեջ՝ 40 ժամկետանց օր:
<i>Երաշխավոր</i>	Ֆիզիկական անձ/անձինք և/կամ շահութաբեր իրավաբանական անձ/անձինք, որը դիմելու պահին ևս չպետք է ունենա ժամկետանց և (կամ) խնդրահարույց դասակարգված վարկային պարտավորություն:
<b><u>Սուբսիդավորում</u></b>	
Արցախի ներդրումային հիմնադրամը մինչև 60 ամիս ժամկետով սուբսիդավորում է վարկի տարեկան տոկոսադրույքի մինչև 70%-ը, մասնավորապես՝	
1. առևտրի դեպքում մինչև 30%, 2. ծառայությունների մատուցման դեպքում մինչև 40%, 3. շինարարության դեպքում մինչև 50%, 4. արդյունաբերության դեպքում մինչև 60%, 5. գյուղատնտեսության դեպքում մինչև 70%	
<b><u>Տպույթ</u></b>	

- ❖ Մարումների ժամանակացույցում նախատեսված ժամկետներում վարկի չնաբան դեպքում վարկառուից գանձվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց վարկի գումարի 0,1%-ի չափով:
- ❖ Տակոսների գծով ժամկետանց պարտք առաջանալու դեպքում վարկառուից գանձվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց տոկոսի 0,03%-ի չափով:
- ❖ Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը:

**ՈՒ ՀԱՂՐՈՒ ԹՅՈՒՆ**  
**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԿ ՏՐԱՄԱՂԻՎԱՏ ԿԱՐԿԻ ԴԵՊՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈՒԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹ ԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՇԴԵՑՈՒ ԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ԿԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԱ:**

**ՈՒ ՀԱՂՐՈՒ ԹՅՈՒՆ**  
**ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵՆ ԼԵՆՈՎ՝ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՅՆՆՈՒ ԹՅԱՐ ԿԱՐԿԻ ՏՈԿՈՍԱՂՐՈՒՅԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽԵԼ:**

- ❖ Վարկային պարտավորությունների չկատարման դեպքում գրավի առարկան իրացվում է հրապարակային սակարկություններով օրենսդրությամբ սահմանված կարգով կամ կազմակերպության համաձայնությամբ՝ այլ անձի կողմից:

**ՉԳՈՒ ՀԱՑՈՒՄ**  
**ՁԵՐ ԳՈՒՅԸ ԿԱՐՈՂ Ե ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱՏ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՍԳԱՆԱԿԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏԵԱՆ ԿԱՏԱՐԵՔ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁԼԱՏԵՐ ԶԵՐ ՊԱՐՏԱԿՈՂՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՈՒՔ ԿՇՐԿԵՔ ԳՈՒՅՔԻ ԼԿԱՍՄԱՐ ԶԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ:**

- ❖ Բիզնես վարկավորումն իրականացվում է Արցախի Հանրապետությունում առնվազն 6 (վեց) ամիս ձեռնարկատիրական գործունեություն ծավալած սուբյեկտներին, առանձին դեպքերում՝ նաև սկսնակ բիզնեսին՝ կայուն եկամուտ ունեցող առնվազը մեկ երաշխավորի առկայությամբ:

**ՈՒ ՀԱՂՐՈՒ ԹՅՈՒՆ**  
**ԿԱՏ ԿԱՐԿԱՅԻՆ ՊԱՍՄՈՒ ԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ Ը ԶԵՉ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԻՈՉԸՆԴՈՏ ՀԱՂԻՍԱՆԱԼ ԱՅՆ ԿԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԻՍ:**

**Վարկառուի կողմից վարկավորման համար երրորդ անձանց (այդ թվում պետական մարմինների) կողմից մատուցվող այլ օժանդակ ծառայություններն են՝**

- Գույքի գնահատում՝ 10000-50000 ՀՀ դրամ (պարտադիր պայման),
- գործարար ծրագրի կազմում՝ 20000-40000 ՀՀ դրամ (պարտադիր պայման),
- բանկային հաշվի բացման և սպասարկման վճար 2000-5000 ՀՀ դրամ(պարտադիր պայման անկանխիկ փոխանցման դեպքում)
- նոտարական վավերացում՝ 500-5500 ՀՀ դրամ,
- կադաստրային ծախսեր՝

ա)գրավի իրավունքի գրանցման վկայական-30000-60000 ՀՀ դրամ (պարտադիր պայման),  
 բ) միասնական տեղեկանք – 10000 ՀՀ դրամ (պարտադիր պայման):

Կազմակերպության կողմից սահմանված վճարներն են՝

- Հայտի ուսումնասիրության վճար-5000 ՀՀ դրամ,
- վարկի տրամադրման միջնորդավճար - տրամադրվող վարկի գումարի 0.5%-ի չափով, նվազագույնը՝ 15000 ՀՀ դրամ,
- կանխիկացում- ՀՀ դրամով տրամադրվող վարկի դեպքում - վարկի գումարի 0.3 %-ի չափով, ԱՄՆ դոլարով վարկի դեպքում - վարկի գումարի 0.4% -ի չափով,

- ❖ Վարկի սպասարկման վճարներին մանրամասն կարող եք ծանոթանալ Ընկերության պաշտոնական կայքէջի՝ [www.fides.am](http://www.fides.am) «Ցառայություններ» պատուհանի «Մակագներ» ենթապատուհանից:

- ❖ Վարկառուի ցանկության վարկը կարող է վաղաժամկետ մարվել: Վաղաժամկետ մարման դեպքում տույժ,տուգանքներ չկան:

- ❖ Դիմում-հայտի քննարկման առավելագույն ժամկետը սահմանվում է 20 օր:

- ❖ Վարկի վերաբերյալ որոշում կայացվելուց հետո վարկային հայտ ներկայացնողին տեղեկացվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը տրամադրվում է անշարժ գույքի գրավի իրավունքի պետական գրանցումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**2901 ՇԱՅՈՒՄ**  
*ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈՎՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄԵՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ  
ԶՎՃԱՐԿԵԼ ՈՒ ԴԵՊՅՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑԿԻ 33  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐՈՒՄ ԵՎ ԱՔՈԱ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ:*

**ՈՒՇԱՐԴՈՒԹՅՈՒՆ**  
*«ՂՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՅՎԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱՄ  
ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿՄՊԻ ՄԻՋՈՑՈՎ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՄՔՈՒՄ ԿՄՍ  
ԷՒԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ:*

**Վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝**

- Դիմում-հայտ,
- որպես գրավ առաջարկվող անշարժ գույքի սեփականությունը հաստատող փաստաթղթի (վկայական կամ սեփականությունը հավաստող այլ փաստաթղթեր) պատճեն,
- գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- կանոնադրության պատճեն, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճեն, պետեզիստրի վկայականի պատճեն, ՀՎՀՀ (հարկ վճարողի հաշվառման համարը),
- գործարար ծրագիր,
- բանկերում հաշվարկային հաշվի վերջին մեկ տարվա շարժը՝ քաղվածքի տեսքով,
- հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի պատճեններ,
- տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ,
- գործունեության հետ կապված օրենսդրական ակտերով պահանջվող բնական ռեսուրսների օգտագործման և այլ բնապահպանական պայմանագրեր, թույլտվություններ, վկայականներ, վկայագրեր, լիցենզիաներ և նմանատիպ փաստաթղթեր,
- իրացման, մատակարարման պայմանագրեր, հաշիվ-ապրաքագրեր, վճարոքների գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Կազմակերպության գործունեության հետ կապված պայմանագրեր՝ վարձակալության, բացառիկ ներկայացուցչական և այլն (առկայության դեպքում),
- գրավի առարկայի գնահատման հաշվետվություն,
- Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից տրված **երաշխավորագիր**,
- ֆիզիկական անձ գրավատուների անձնագրերի պատճեններ, երաշխավորողների դեպքում՝ վերջիններիս անձնագրերի պատճեններ և համաձայնություն՝ վարկային պատմության վերաբերյալ հարցումներ կատարելու մասին,
- ֆինանսական հաշվետվությունները (Հաշվեկշիռ, Հաշվետվություն եկամուտների և ծախսերի վերաբերյալ, Հաշվետվություն կանխիկ դրամի շարժի վերաբերյալ)՝ վերջին հաշվետու ժամանակահատվածի համար, շահութահարկի հաշվարկ, հարկային մարմնին ներկայացվող այլ հաշվետվություններ,
- վճարունակությունը և/կամ եկամտի աղբյուրը հավաստող այլ փաստաթղթեր՝ ֆիզիկական անձի դեպքում,
- հիմնական միջոցների ցանկը, քանակը, հաշվեկշռային արժեքը և ձեռքբերման տարեթիվը,
- ապրանքանյութական պաշարների վերաբերյալ տեղեկանք,

- արտադրության տարեկան ծավալների վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ամիսների,
- Արտադրանքի իրացման և/կամ ծառայության մատուցման տարեկան ծավալներ՝ ըստ ամիսների,
- իրացված ծավալների դիմաց դրամական մուտքեր՝ ըստ ամիսների,
- ծախսեր՝ ըստ հոդվածների և ըստ ամիսների,
- կանխատեսումներ (դրամական հոսքեր, արտադրության, իրացման ծավալների և այլն),
- բանկերում աշխատող վարկերի վարկային պայմանագրերի և գրաֆիկների պատճենները,
- դեբիտորական և կրեդիտորական պարտքի մնացորդ, ըստ դեբիտորների և կրեդիտորների անվանացանկի՝ համապատասխանաբար առաջացման և մարման ժամկետները,
- իրավասու մարմնի որոշումը՝ վարկի և դրա ապահովման համար առաջարկվող միջոցի (գրավ, երաշխավորություն և այլն) վերաբերյալ գործարքներ կնքելու մասին,
- տեղեկանք գրանցված բաժնետերերի /մասնակիցների/ հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ, ՄՊԸ-ի դեպքում՝ տրված պետ. ռեգիստրի կողմից, բաժնետիրական և այլ կազմակերպա-իրավական ձևի իրավաբանական անձի դեպքում՝ տրված պետական դեպոզիտարիայի կողմից, իսկ տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ՝ տրված պետ. ռեգիստրի կողմից,
- գրավատուների մասին տվյալներ (եթե միաժամանակ վարկառու չեն),
- այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Կազմակերպությունը:
  - *Դիմում-հայտի հաստատման պայմաններն են՝*
    - Անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական ներկայացում,
    - հաճախորդի կողմից արժանահավատ տեղեկությունների տրամադրում,
    - դրական վարկային պատմություն՝ չունենա ժամկետանց և (կամ) խնդրահարույց դասակարգված վարկային պարտավորություն, ինչպես նաև բոլոր վարկերի գծով վերջին 12 ամսվա ընթացքում չունենա 120 և ավելի ժամկետանց օրերի առկայություն, իսկ անընդմեջ՝ 40 ժամկետանց օր,
    - վարկունակության վերլուծության դրական արդյունքներ,
    - ընդունելի և բավարար արժեքով գրավ:

- *Դիմում-հայտի մերժման գործոններն են՝*
  - Անհրաժեշտ փաստաթղթերի ոչ ամբողջական ներկայացում,
  - հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տեղեկությունների տրամադրում,
  - բացասական վարկային պատմություն՝ ժամկետանց և (կամ) խնդրահարույց դասակարգված վարկային պարտավորություն, ինչպես նաև բոլոր վարկերի գծով վերջին 12 ամսվա ընթացքում 120 և ավելի ժամկետանց օրերի առկայություն, իսկ անընդմեջ՝ 40 ժամկետանց օր:
  - վարկունակության վերլուծության բացասական արդյունքներ,
  - ոչ ընդունելի և (կամ) ոչ բավարար արժեքով գրավ,
  - դիմում-հայտերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնի կողմից դիմում-հայտի մերժում:

**Բիզնես վարկերը տրամադրվում են «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՓԲԸ  
 «Արցախ» մասնաճյուղի կողմից:  
 Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Գռչ 2/33**